



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

**Թիվ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

20 օգոստոսի 2020 թվականի

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Նիստին մասնակցում են ավագանու անդամներ՝ Դավիթ Ճավրուշյանը, Մանվել Չերքեզյանը, Արման Պապյանը, Խալաթ Ռևազյանը, Աշոտ Քալանթարյանը:

Նիստը վարում է Ստեփանավան համայնքի ղեկավար՝ Միքայել Ղարաքեշիշյանը:

Նիստը արձանագրում է Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Ղալայանը

Լսեցին Ստեփանավան համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին

Համայնքի ղեկավար Միքայել Ղարաքեշիշյանը հայտնեց, ա/թ օգոստոսի 20-ին, որ համայնքի ավագանու անդամներ՝ Գոռ Ասրյանի, Արմեն Գրիգորյանի, Տիգրան Թունյանի, Հնայակ Մարտիրոսյանի, Անդրանիկ Տոնոյանի, Արսեն Հարությունյանի, Արթուր Սուքիասյանի լիազորությունների դադարեցման հետևանքով անհնարին է դարձել ավագանու նիստերի հետագա անցկացումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ավագանու անդամներ՝ Դավիթ Ճավրուշյանը, Մանվել Չերքեզյանը, Արման Պապյանը, Խալաթ Ռևազյանը, Աշոտ Քալանթարյանը և համայնքի ղեկավար՝ Միքայել Ղարաքեշիշյանը կազմեցին սույն արձանագրությունը, որը ներկայացվելու է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու համար:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** *Mikael* **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**